

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ս. ԱՇՈՐԻՆ ԵՒ ԻՐ ԸՆՏՐԵԱԼ ԳԱՅԱԿԱԼԸ

Անցեալ տարուան ապրիլի 27-ին էր որ անմանն Դուքեան Պատրիարքի ընտրուոր ջահճն շիջումովը թափուր մնացած էր Առաքելական Սուրբ Աթոռը։ Շատ երկար տևեց Աթոռին պարապութիւնը։ սպասուածէն աւելի այնքան՝ որ էր սկսէր այլիս մտահոգութիւն պատճառել։ Վերջապէս հասաւ սակայն ընտրութեան փոփօխուած կանոններուն զործադրութեան արտօնագիրը՝ Քրիտանական բարեինամ կառավարութենէն, և վերջ գտնելու վրայ է Ս. Աթոռին մէջ տիրող կայուն և սպասողական կացութիւնը։

Նախորդ Պատրիարքի մահէն մինչև նորին ընտրութիւնը երկարող աւելի քան միամերայ շրջանը, որքան ալ չի ներկայեր մեզի ուեէ ակնբախ քայլ մը դէսի յառաջ, կրօնական և այլ մարզերու մէջ, այսուհանդերձ խաղաղ աշխատանքի շրջան մ'եղաւ չնորհիւ Պատրիարքարանիս Տնօրէն Փողովին, և մանաւանդ անոր զուտիր գտնուող Ս. Աթոռոյս Պատր. Տեղապահ Տ. Մեսրոպ Արք, Եպիսկոպոսի, արդիւնաւոր հանդիսանալով՝ որքան որ կարելի էր «նախկին» ը, Տեւակարգը (սատու-Շուօն) միայն՝ իր ամէն հանգամանքներով՝ չափանիշ ընտրելով յառաջ տարուած զործունէութեան մը ընթացքին։

Տ. Մեսրոպ Արքազանի Տեղապահութեան շրջանը նշանակելի հանդիսացաւ՝ Հանգուցեալ Պատրիարքի օրով պատրաստուած կամ սկսած կարգ մը զործերու յառաջ տարուելով կամ ի զուտի հանուելովը։ Ասոնց մէջ ամէնէն կարեւորները եղան՝ կիւլպէնկեան սաներու կուսակրօն քահանայ ձեռնադրութիւնը, ութը սարկաւագներու ձեռնադրութիւնը, Գ. Կիւլպէնկեան Մատենադարանի կառուցումը, Դուքեանաշնի շնութեան ձեռնարկութիւնը, Մեծ Արքի կալուածներէն Օթէլ Ֆասարի նորոգութիւնը, ևայն։

Սակայն ամէնէն կարեւոր զործը, որ կատարուեցաւ Գեր. Տ. Մեսրոպ Արքազանի Տեղապահութեան ներքն, Երուսաղէմի Պատրիարքական ընտրութեան վերաբերեալ Աահմանադրութեան և Միաբանական կանոնի յօդուածներուն փոփոխութեան զործն էր, որ այնքան իմաստութեամբ և լաւաղոյն կերպով յառաջ տարուեցաւ և վերջնական ձեր մը բերուեցաւ։ Այս զործին մանրամասն ներկայացումը՝ Սիոնի-ի էջերէն՝ յառաջիկային թողլով՝ կը փութանք մեր ընթերցողներուն և Հայց. Եկեղեցւոյ հարազատ զաւակներուն ներկայացնել անոր արդիւնքը Սիոնի-ի այս թիւով։

Ա.մսոյս 16-ին, նախորդ օրը պատրաստուած հինգանուն ցանկին վրայէն, ընտրուեցաւ Ս. Աթոռոյս Պատրիարք Գեր. Տ. Թորգոմ Արքեպս. Դուչակեան, որ մինչև ընտրութիւն Եղիպատոսի 17 տարուան Առաջնորդն էր, և որ ցարդ կը

համայ Գահիրէ, սպասելով որ ժամանէ կայսերական հաստատութեան հրովարտակը, վասնզի անոր ժամանումէն ետքը, Ս. Յակոբեանց Տաճարին մէջ, Աւագ Սեղանի առջև իր կատարելիք ուխտովն է որ իրավէս և իրաւապէս Ս. Աթոռին զահակալ կը դառնայ Բնուրեալը :

Այս տողերը նախորդող կենսազրական զիծերը, Ն. Ամենապատութիւնը մօտէն անձնապէս չճանչցողներո՛ւն համար իսկ ինքնին բաւական են պերճախօս վկայութիւն մը տալու ընտրեալին անձին, զործին ու նկարազրին շուրջ :

Արևէ զնահատանքի, յարդանքի և հիացումի տուրք՝ մեր կողմէն՝ անոր ուղղեալ՝ զայն ծնող և անով իր փառքը զարդարող մեր Սուրբ Եկեղեցիին աշ-ըէն դրդուած է, վասնզի նորընտիրը «մեզմէ» միայն չէ, այլ ամբողջ Հյու Աւղ. Եկեղեցիէն :

Տ. Թորգոմ Արքեպիսկոպոսով արդի հայ եկեղեցականութեան ամէնէն իմաստուն, ամէնէն հմուտ, ամէնէն աստուածապաշտ դէմքերէն մէկն է որ կը բազմի Ս. Յակոբեանց առաքելահատատ այս աթոռին վրայ : Դէմք մը՝ որ իր գործունէութեանց ընթացքին Տիրով ծառայութիւնը լայնազոյն սահմանի մը մէջ, հաւատարիմ կերպով մը, և անընկճելի յարաւեռութեամբ ու կարողութեամբ մը յառաջ տարած է ազգին մէջ, այնպէս՝ ինչպէս ժամանակներուն և հանդամանք-ներուն համար ամէնէն աւելի օգտակար եղանակն էր :

Իրօնական տեսակէտով՝ բարեպաշտ, կրթական տեսակէտով՝ զարգացեալ և վարչական տեսակէտով՝ կարգ կանոնի նախանձախնդիր անձի մը պէտք ունէր Ս. Աթոռը, և դառաւ զայն՝ ողջամիտ ու երջանիկ ընտրութեամբ մը՝ յանձին Տ. Թորգոմ Արքեպիսկոպոսի :

Նատ խօսուած է այն դերին վրայ՝ զոր այս Աթոռը, իր Միաբանութեամբ, կոչուած է կատարելու Հյու. Եկեղեցիին բարեկարգութեան (այս բառը՝ իր բուն իմաստով և ո՛չ թէ ժԶ. դարու եւրոպական ծուռ իմաստով) գործին մէջ : Հայ հաւատացեալը կրնայ ապահով ըլլալ՝ որ նոր Գահակալը, իր շուրջի Միաբանութեամբ, և նոյնինքն հայ հաւատացեալին վստահութեամբ իր առաջ-նորդներուն վրայ՝ կարելին ընելէ պիտի չդադրի այդ ուղղութեամբ հետզհետէ : Ինչ որ կարևորն է՝ հոգեորական իշխանութեան և Հյու. Եկեղեցւոյ զաւակներուն միջև փոխադարձ վստահութիւնը և սէրն է : Վստահութիւն և սէր՝ հրաշքներ կը զործեն : Բնդհակառակը ամբոխավարական կերպերով յառաջ եկած անվստահութիւն և հեստութիւն՝ կործանարար արգիւնքներ միայն յառաջ կը բերեն ամէն կերպով :

Հայ քրիստոնեայ ժողովուրդը, Ս. Յակոբեանց Միաբանութեան հետ՝ կը հրճուի այժմ արժանաւոր այս զահակալին ընտրութեան համար :

Այս հանդէսը, թարգման հանդիսանալով այդ ինդութեան՝ զերազոյն խանդավառութեամբ կ'ողջունէ և կը չնորհաւորէ Առաքելական Ս. Աթոռին յառաջիկայ Գահակալը, մաղթելով Անոր կարողութիւն և յաջողութիւն՝ իր բոլոր յառաջիկայ աստուածանանոյ զործերուն մէջ, Առք. Ս. Աթոռին վրայ, Աստուծոյ և հայ քրիստոնեայ ժողովուրդին համար :

S. Ա.